



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ, Դուկասավանի

միջնակարգ դպրոց

Երևան 2023

Թեմա – Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Հարց – Ինչի՞ց կարող են առաջանալ ընտանիքում կոնֆլիկտները



Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
2. ԳԼՈՒԽ 1. ԻՆՉ Է ԸՆՏԱՆԻՔԸ.....	5
3. ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	6
4. ԳԼՈՒԽ 3. ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	8
5. ԳԼՈՒԽ 4 . ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ.....	13
6. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	15
7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ընտանեկան կյանքում պետք է հաշվի առնել
միմյանց մտքերը, համոզմունքները,
զգացմունքները

սիրելի մարդու ձգտումները : Պահպանելով
սեփական արժանապատվությունը՝ պետք է
կարողանալ զիջել
միմյանց>>

ՎԱՍԻԼԻ ՍՈՒԽՈՍԼԻՆՍԿԻ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում նկատվում է դիսֆունկցիոնալ ընտանիքների աճ, ինչը հանգեցնում է երեխաների սոցիալ-հոգեբանական անհամապատասխանության: Դրա պատճառներից են ժամանակակից փոփոխությունները տնտեսության, քաղաքականության և սոցիալական ոլորտում, որոնք կտրուկ բարդացրել են ոչ միայն կյանքի նյութական պայմանները, այլև ընտանիքի հոգևոր մթնոլորտը, ժամանակակից սոցիալական պահանջների պայմաններում նկատելիորեն աճել է երեխաների անհանգստության մակարդակը, աճել են ծնողների պահանջները իրենց երեխաներից: Ծնողները միշտ չէ, որ կարողանում են օգնել երեխային հաղթահարել առաջացած դժվարությունները, և երբեմն իրենք են առաջացնում երեխայի անհանգիստ վիճակ՝ անհրաժեշտ հոգեբանական և մանկավարժական գիտելիքների բացակայության և չլուծված անձնական խնդիրների պատճառով:

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

Ժամանակակից հասարակական հարաբերությունները ընտանիքում ծնում են տարաբնույթ տնտեսական, սոցիալական, բժշկական, իրավաբանական և կրթական խնդիրներ, որոնցից բխող հավանական դժվարություններն ու բարդությունները, դրսևորվելով ընտանեկան կյանքի տարբեր ոլորտներում,

կարող են վերածվել հոգեբանական բարդ ճգնաժամային իրավիճակների և ընդգրկել ընտանիքն ամբողջությամբ:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերությունները էական փոփոխությունների են ենթարկվել, փոխվել են ընտանիքում ամուսինների

ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից տեխնոլոգիաները իրենց դրական և բացասական ազդեցությամբ մեծ ներգործություն ունեն ընտանիքի անդամների հոգեբանության և նրանց փոխհարաբերությունների վրա: Մարդկային սովորական շփումը փոխարինվել է վիրտուալ հաղորդակցությամբ՝ ազդելով մարդկանց ինքնարտահայտման և ինքնադրսևորման վրա: Հաճախ ապրելով միևնույն հարկի տակ՝ ընտանիքի անդամ ները օտարանում են տարբեր պատճառներով: Թվում է, թե ժամանակակից աշխարհում, երբ զարգացման բարձր մակարդակի են հասել տեխնոլոգիաները և մարդկային միտքը՝ նվազագույնի հասցնելով կենցաղային ծանրաբեռնվածությունը, խնդիրները ևս պետք է նվազեին, սակայն իրականում հակառակն է կատարվում: Ելնելով խնդրի արդիականությունից՝ որոշեցի ընտրել

<<Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ>> թեման՝ փորձելով ծանոթանալ տվյալ ոլորտում առկա գիտական ուսումնասիրությունների հետ, ներառել եմ նաև անապահով ընտանիքների հոգեբանությունը, փորձելով ներկայացնել կոնֆլիկտների տեսակները և առաջացման պատճառները: Թեման բավականին ծավալուն է, ընդլայնվելու հակում ունի և վերջնական լուծում չունի, այդ իսկ պատճառով փորձել եմ անդրադառնալ հատկապես առանցքային հիմնախնդիրներին, առաջ քաշել լուծման որոշակի տարբերակներ:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՉ Է ԸՆՏԱՆԻՔԸ

Մարդկային քաղաքակրթությունն իր զարգացման ընթացքում ստեղծել է մի շարք անփոխարինելի արժեքներ, որոնց թվին է պատկանում նաև ընտանիքը:

Ընտանիքը, ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:

Ընտանիքի գործառույթները:

1. Վերարտադրողական- երբ ընտանիքում ծնվում են նոր մարդիկ՝ ապահովելով սերնդի վերարտադրությունը և մարդկության գոյությունը:

2. Տնտեսական- երբ ընտանիքը՝ որպես տնտեսական միավոր, վաստակում է կենսական միջոցներ և ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը: Նախկինում տնտեսական գործառույթը հիմնականում ապահովում էր տղամարդը, իսկ ներկայումս այն բաշխվում է ընտանիքի տարբեր անդամների միջև:

3. Սոցիալականացման, դաստիարակչական- դրա շնորհիվ երեխան ընկալում է նախորդ սերունդների փորձը, հասարակության մեջ վարքի նորմերն ու կանոնները: Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ աճում ու զարգանում է երեխան, ուստի նաև այստեղ են առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգնությամբ նա սովորում է ապրել:

4. Հաղորդակցական- երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ, զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում, փոխազդում են՝ նպաստելով միմյանց զարգացմանը, անձնային, հոգեբանական վերափոխումներին: Ցանկացած զույգի կյանքում տարաձայնություններ են առաջանում, որոնք երբեմն առաջացնում են իրական կոնֆլիկտներ: Երեխաները կարող են դառնալ այդ կոնֆլիկտների վկաներ և երբեմն մասնակիցներ: Երեխային չվնասելու համար կարևոր է հասականալ ընտանեկան վեճերի առանձնահատկությունները և

կարողանալ դրանք լուծել:

ԳԼՈՒԽ 2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիք համարվում է ամուսինների, ծնողների և երեխաների փոխհարաբերությունների համակարգ, փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են ամուսնական կամ արյունակցական հարաբերություններով, ընդհանուր կենցաղով և բարոյական փոխադարձ պատասխանատվությամբ: Այն մարդկանց սոցիալական հանրության առավել հին ձևերից է և ծագել է ազգերից և պետություններից շատ ավելի վաղ՝ նախնադարյան համայնական հասարակարգի ընդերքում: Ընտանիքը առաջնային խումբ է, որովհետև նրա անդամների հարաբերությունները շատ սերտ են, հուզականությամբ և մարմնային շփումով հագեցած:

Բազմաթիվ գիտական և այլ աշխատանքներ են նվիրվել ընտանիքի ամենատարբեր և միջոտ էլ օրախնդիր հիմնահարցերին: Ընտանիքի վերաբերյալ արտաքուստ կարծես թե ամեն ինչ հայտնի է ու պարզ, սակայն այն նույնքան պարզու նույնքան բարդ է, որքան ինքը՝ հասարակությունը: Ընտանիքը և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրամարդկային ճակատագրի համար: Սովորաբար, երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի, դեռահասի լավ կամ վատ արարքի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է, ինչ դաստիարակություն է ստացել, ովքեր են և ինչով են զբաղվում նրա ծնողները: Եթե նրա վարքագիծը հավանության կամ գովասանքի է արժանանում շրջապատողների կողմից, ապա պարզ է դառնում, որ սովյալ անձը դաստիարակվել է լիարժեք ընտանիքում, ընտանեկան առողջ բարոյա հոգեբանական մթնոլորտում, այսինքն՝ բարենպաստ ընտանիքում: Յուրաքանչյուր մարդ, դառնալով չափահաս և ինքնուրույն, ցանկություն է ունենում ստեղծելու իր ընտանիքը, ունենալու իր սեփական անկյունն ու երեխաները: Առողջ ընտանիքներում հարաբերությունները սերտ են ու անմիջական, ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, հաճախակի են շփվում, լավ գիտեն միմյանց: Ընտանիքն այն առաջին միջավայրն է, որտեղ աճում, զարգանում և դաստիարակվում է երեխան, ուստի նաև այստեղ են առաջին դպրոցն ու

ուսուցիչները, որտեղ և ումօգնությամբ նա սովորում է ապրել: Ժամանակակից ընտանիքը էապես տարբերվում է ոչ այնքան վաղ անցյալի ընտանիքներից ոչ միայն սոցիալ-բարոյականֆունկցիաներով, այլև ընտանիքի անդամների միջև անընդհատ փոփոխվող

հուզական-հոգեբանական հարաբերությունների տեսանկյունից, որը
հսկայական դեր է կատարում դեռահասի անձնավորության ձևավորման առումով:

Գլուխ 3 Ընտանիքի հոգեբանական բնութագիրը

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրասկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բխվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվկապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը

պայմանավորված է հասարակության^a բնակչության ֆիզիկական և հոգևոր
վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. <Ընտանիքը

հասարակության բջիջն է>: Այսինքն հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ եթե է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են, թե՞ ամուսինների, թե՞ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ: Ամուսնությունը հենված է դրդապատճառների համակարգի վրա:

Դրդապատճառները հենված են գիտակցության աստիճանի վրա և իրականացնում են անձի կյանքի կարևոր հարաբերությունները աշխարհի նկատմամբ, կազմում են մարդկային պահանջմունքների հիերարխիայի հիմքը: Ընտանիքի հոգեթերապիայի մասնագետ Հենրի Դիքսը դասակարգել է ամուսնության հետևյալ դրդապատճառները:

- Սերը
- Մշտական սեքսուալ զուգընկեր ունենալու ցանկությունը
- Հոգեբանական պատճառները
- Երեխա ունենալու ցանկությունը
- Կենցաղային խնդիրների

լուծումը Ստեղծված

հանգամանքները:

Շատ մասնագետներ փորձել են պարզել, թե ինչ է սերը: <<Միայն սիրո միջոցով և սիրո գիտակցության միջոցով է մարդը մարդ դառնում>>, - ասել է Ֆ.Շլեգելը: Սերը մեր իսկական մարդկային բնույթի մի մասն է, այն հզորագույն զգացմունքներից մեկն է հույզերի ոլորտում, եթե ոչ ամենահզորը: Սերը խորը կապվածություն է երկու մարդկանց միջև: Սերը հաճախ շփոթում են սիրահարվածության հետ:

Հասուն սերը զգայական հակման, մարդկային ջերմության և ուրիշի հետ ինտիմ մտերմության հոգեկան անհրաժեշտության օրգանական միասնությունն է:

Սիրահարվածն ապրում է ուժեղ և վառ զգացմունք, բայց այն կենտրոնացված է գլխավորապես իր և իր ապրումների վրա, նա պահանջկոտ է, անզիջում և էգոիստ: Իսկ հասուն սիրո մեջ ծանրության կենտրոնը տեղափոխվում է զուգընկերոջ վրա:

Մարդը նախ և առաջ մտահոգվում է նրա մասին, ում սիրում է, նրա հետաքրքրությունների, բարօրության, երջանկության և ինքնաարտահայտման մասին՝ ողջ ուժերով նպաստելով վերջիններիս իրականացմանը: Ուրիշ մարդու մասին մտածելու ունակությունը,

տալով ուրախություն ապրելու ունակությունը հասուն սիրո պարտադիր ուղեկիցներն են:

Սերը քաղց է ինչ-որ մեկի հանդեպ, մարմնի և հոգու ամենասուր քաղցը: <Սիրել նշանակում է հաճույք ապրել, երբ տեսնում ես, շոշափում, զգում բոլոր զգայարաններով այն էակին, որին սիրում ես>, - ասել է Ստենդալը: Սերը կառույց էմեր բոլոր խորքային պահանջմունքների և զգայությունների վրա: Դա մարդկային ուժերի ամենասեղմ, ամենախտացված միաձուլումն է մարմնական և հոգևոր, գիտակցական և ենթագիտակցական ուժերի:

Սիրո ամենաբարձրագույն թռիչքը, նրա ամենապայծառ դրսևորումը հոգիների միաձուլումն է: Հոգու գաղտնարաններում առաջանում է ցավ ուրիշ մարդու համար այպես, ինչպես կցավես ու կանհանգստանաս ինքդ քեզ համար: Սերն ուշադրություն է, բարության, համբերություն, քնքշություն, երախտագիտություն, հարգանք և նվիրվածություն: Նա, ով սիրում է, ընդունում է իր սիրելիի հրապուրանքները, որպես իր սեփականները: Նա ընդունում է ուրիշին այնպես, ինչպիսին նա կա և հավատում է նրան: Նա, ով սիրում է, ունակ է զիջելու և ներելու: Ներումը իսկական սիրո ակտ է: Խիստ տարբեր է տղամարդու և կնոջ վերաբերմունքը սիրո նկատմամբ: Կինը հանճարեղ է իր սիրո մեջ, նրա վերաբերմունքը սիրո նկատմամբ ունի վերսալ է. նա սիրո մեջ ներդնում է իր բնույթի ամբողջ լիարժեքությունը: Իսկ տղամարդն ավելի շուտ տաղանդավոր է սիրո մեջ, քան հանճարեղ: Նա իրեն ամբողջությամբ չի դնում սիրո մեջ և ամբողջությամբ կախված չէ այդ սիրուց: Կնոջ սիրո պահանջներն այնքան անսահման են, որ երբեք չեն կարող բավավարարվել տղամարդու կողմից: Սերը դրականորեն է ազդում ընտանեկան հարաբերությունների բնույթի վրա այն ժամանակ, երբ զուգընկերները փոխադարձաբար կիսում են միմյանց դիրքորոշումներն իրենց համար կարևոր երևույթների, իրադարձությունների և արարքների հանդեպ: Ինչպես նշել է Սենտ-Էքզյուպերին. <Իսկական սերը միմյանց աչքերին նայելու մեջ չէ, այլ միասին նույն ուղղությամբ նայելու մեջ>: Ամուսնական կյանքի հաջողության վրա ազդում է ամուսինների համատեղելիությունը բոլոր ոլորտներում, երբ մարդիկ ոչ միայն համատեղվում են, այլև լրացնում մեկը մյուսին: Սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը

ենթադրում է որոշակի ընդհանրություն, որը կարելի է դիտարկել երեք մակարդակներում.

1. Բարձրագույն և առավել բարձր մակարդակը արժեքակողմնորոշիչ

միասնությունն է կենսական արժեքների, ձգտումների, իդեալների,
հետաքրքրությունների,
համոզմունքների միասնությունը, ինչպես նաև աշխարհայացքային միասնությունը:

2. Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածությունը մարդկանց^ա
իրենց դերերի և ֆունկցիաների մասին պատկերացումների
համաձայնեցվածությունն էտվյալ միության մեջ:

3. Մարդկանց անհատական-հոգեբանական բնութագրերի համատեղելիությունը:

Հետաքրքիր է, որ բարեհաջող գույգերը, որոնք ունեն կայուն և առավելագույնս
համատեղելի հարաբերություններ, տարբերվում են հակառակ խառնվածքով.
դյուրագրգիռ խոլերիկը և հանգիստ ֆլեգմատիկը, ինչպես նաև մելանխոլիկը և
կենսուրախ սանգվինիկը կարծես լրացնում են իրար: Եվ հակառակը^ա երկու
խոլերիկներից կազմված ընտանիքին կարող է սպասվել բարձր կոնֆլիկտայնություն
ամուսինների պոռթկունության և անզսպության պատճառով: Պարզվում է^ա
առավել ունիվերսալ գույզներն են համարվում ֆլեգմատիկները, քանի որ
նրանք հարմարվում են խառնվածքի ցանկացած տիպի հետ, բացի սեփականից:
Չկա այնպիսի ամուսնական գույզ, որտեղ ամուսինները լիովին նման լինեն
միմյանց: Սակայն պետք է նկատի ունենալ, որ համատեղ կյանքն
աստիճանաբար հարթում է կտրուկ տարբերությունները ամուսինների
հետաքրքրությունների, նախասիրությունների, հայացքների միջև, և առաջանում
է գնահատականների ու վերաբերմունքի ընդհանրություն: Եթե
տարբերությունները շատ են, պետք է հաբերելու նաև ձգտել ավելի լավ
հասկանալ ամուսնուն: Երբ ամուսիններն իրար լավ են հասկանում, նրանց
բնավորության կամ խառնվածքի, վարքագծի խութերն ուժեղ չեն բախվում և
խանգարում միմյանց: Երբ ամուսիններն անգամ իդեալական միասնության
դեպքում հանդուրժում են միմյանց ինքնությունն ու անկախությունը, ապա
զբաղմունքների տարբերությունը, բնավորությունների զանազանությունը չեն
կարող տևական անջատման շարժառիթ ծառայել:

Եվ ընդհանրապես ամուսնության սկզբում կյանքը զարմանալիորեն հեշտ և
ուրախալի է թվում, գրեթե իդեալական: Ի վերջո ռոմանտիկ հիացումներին
փոխարինելու են գալիս կենցաղը, առօրյան իր անխուսափելի սթրեսներով:

Կենցաղն ամենամեծ փորձությունն է երիտասարդ ամուսինների համար:
Միմյանց լրիվ բացահայտումն ու գունագրկումը երկրորդ ծանր քնությունն է
նորապսակների

համար, իսկ երրորդը դերերի, պարտականությունների բաշխումը: Աստիճանաբար նրբագրացությունը, քնքշությունը, հաճոյախոսությունները, երախտագիտության արտահայտությունները քչանում են տեղ տալով փոխադարձ քննադատություններին: Հաճախ զուգընկերները դառնում են ավելի պակաս ուշադիր միմյանց նկատմամբ և ավելի էգոիստ, քան առաջ: Սառած զգացմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել, ուստի սերն ամուսնության մեջ մշտապես պահպանել: Միաժամանակ պետք է հասկանալ և գիտակցել, որ մինչամուսնական, պատանեկան սերը և ամուսնական սերը նույնը չեն: Ներդաշնակ ընտանիքներում մարդիկ միշտ լսում են միմյանց հույզերն ու պահանջմունքները, նրանք բարի են, քնքուշ, հավատարիմ ու համբերատար: Նրանց հարաբերությունները հիմնված են հարգանքի, փոխադարձ օգնության, ներողամտության վրա: Երջանիկ ամուսինների կյանքում մշտապես տեղի է գտնվում ուշադրության նշանների համար, որոնք արտահայտում են ջերմություն և հոգատարություն միմյանցն կատմամբ:

ԳԼՈՒԽ 4 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԸՆՏԱՆԻՔԻ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ

Հայտնի է, որ ընտանիքը ամենալավ միջավայրն է երեխայի խնամքի և դաստիարակության համար, քանի դեռ այնտեղ ապահովված է նրա պաշտպանությունը: Կապվածության և սիրո հարաբերությունները բարենպաստ և անհրաժեշտ նախադրյալներ են երեխայի անձի նորմալ ձևավորման, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների կառուցման համար:

Նյութական անբավարար ապահովվածությունը և տնտեսական բազում հիմնախնդիրները պատճառ են դառնում հաճախակի ճգնաժամային իրադրությունների: Այս ամենի հետևանքով էլ հասարակության մեջ ընտանիքը դառնում է անբարենպաստ և խոցելի:

Ընտանիքի նկատմամբ անբարենպաստ գնահատականը կամ որակավորումը հիմնականում հոգեբանական է, ավելի ստույգ՝ սոցիալ-հոգեբանական: Ընտանիքի անբարենպաստությունը կարող է կապված լինել սոցիալ-տնտեսական գործոնների հետ, բնութագիրը կարող է և ոչ մի կապ չունենալ: Այսինքն ընտանիքի բարեկեցիկ և անբարեկեցիկ լինելը, արտահայտելով նրա նյութական վիճակը, դեռևս չի արտացոլում նրա հոգեբանական նկարագիրը, թեկուզ միջնորդավորված ձևով դա ազդում է այդ նկարագրի վրա: Անբարենպաստությունը իր մեջ ներառում է շփման, հաղորդակցման հարաբերությունների, վերաբերմունքի իդենտիֆիկացիայի նույնանման ցուցանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ որոշակիորեն սոցիալապես ախտահարված են:

Անբարենպաստ ընտանիքի հոգեբանական բնութագիրը հատկանշվում է նրանով, որ այն մանկավարժորեն, հասարակայնորեն անընդունելի դաստիարակ-չական ներգործությամբ նպաստում է անձի սխալ կայացմանը, նրա մեջ բացասական վերաբերմունքների և դիրքորոշումների, հետաքրքրությունների և պահանջմունքների, հակումների ձեռքբերմանը, ինչպես նաև կյանքին ու շրջապատին չհարմարվելուն:

Ընտանիքում հաստատված երեխաների և ծնողների միջև աններդաշնակ

հարաբերությունները կարող են բերել երեխաների մոտ վարքային խանգարումների,

ինչն իր հերթին կարող է պայմանավորել երեխայի անձի ձևավորման որոշակի շեղումներ: Այսինքն՝ այդպիսի ընտանիքը իր նկարագրով, վարք ու բարքով,

կենսակերպով ստեղծում է հոգեբանական ակնառու նախադրյալներ և նպաստավոր պայմաններ այնտեղ աճող մարդու բարոյական և սոցիալական դեգրադացիայի համար: Այստեղ անձը ենթարկվում է աստիճանական դեֆորմացիայի, որն արտահայտվում է անձնային անբարենպաստ որակների ու հատկանիշների և դրանով պայմանավորված սոցիալապես ոչ համարժեք վարքի դրսևորումներով: Բոլորովին պարտադիր չէ, որ նման ընտանիքում մեծացող անձը անպայման ընտրի օրինազանց կամ օրինախախտ վարքի ուղին: Վերջինս ակնհայտորեն կկրի ընտանիքի անբարենպաստության կնիքը, կարող է լինել ոչ բարյացակամ, չկամ, զուրկ գթասրտությունից, անտարբեր լինել մարդկանց նկատմամբ, չունենալ հասարակական ակտիվություն, ունենալ արտահայտված չարություն, ագրեսիվություն, մարդասեր չլինել, որոնք կարտահայտվեն մարդ-մարդ, մարդ- հասարակություն հարաբերություններում:

Անբարենպաստ ընտանեկան պայմաններում ապրող երեխաներից շատերը կարգազանց և հակասոցիալական վարք դրսևորողներն են: Իսկ այդ ամենը պայմանավորված է ընտանիքում ծնողների կրթական մակարդակի բացակայությունից, ոչ ճիշտ դաստիարակությունից, անապահովվածությունից, ծնողների անբարո վարք դրսևորելուց, ամուսնալուծված ընտանիքում մեծանալուց, ինչպես նաև ամենօրյա կոնֆլիկտային իրավիճակներին մասնակից լինելուց:

Անբարենպաստ ընտանիքների սոցիալ-հոգեբանական կառուցվածք, դրանց հարաբերությունների յուրահատկությունները, բնականաբար, նկարագրվածով չեն սահմանափակվում: Ակնհայտ է այն, որ ընտանիքի անբարենպաստությունը ինքնին սթրեսածին, կոնֆլիկտածին է և առաջացնում է դաստիարակչական և բարոյական բնույթի շատ հիմնախնդիրներ, որոնց նախազգուշացումն ու հաղթահարումը հասարակական, պետական կարևորություն ունեն:

Ընդհանրացնելով անբարենպաստ ընտանիքի սոցիալ-հոգեբանական նկարագիրը՝ նշենք դրա հիմքը կազմող հիմնական առանձնահատկությունները. ա. հոգեբանական անհամատեղելիությունը ծնողների միջև, որով առավելապես պայմանավորվում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտը և հարաբերությունները բ. մանկավարժական անհամատեղելիություն,

որն արտացոլում է երեխաների
դաստիարակության հարցում տարակարծությունը.
գ. ընտանիքի դերի գնահատման, ընտանեկան հարաբերությունների.

կազմակերպմանն կառավարման կարողությունների

բացակայությունը. դ. ծնողների գիտակցության երկատվածություն

ե. ծնողների սոցիալական դերի, վարքագծի և սպասումների միջև
հոգեբանականանհամատեղելիություն.

զ. Խոր հոգեբանական հակասությունը ծնողների վարքի ու գործունեության և
երեխաներին ներկայացվող պահանջների մջև.

է. երեխաների ճիշտ դաստիարակության հարցում ծնողների ցանկությունների և
նրանց գիտելիքների ու հնարավորությունների միջև հակասություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով , ընտանիքում կոնֆլիկտները կարող են առաջանալ ցանկացած հակամարտության կողմերի շահերի առձակատումից , հայացքների վերաբերմունքի, սպասումների անհամապատասխանության պատճառով: Երբեմն վեճ է ծագում կենցաղայի հողի վրա, ֆինանսական դժվարությունների, սեռական նախասիրությունների անհամատեղելիության պատճառով:

Պատճառները շատ են, կարող են լինել շատ անհատական:

Որպես կանոն , ընտանեկան վեճերը ծագում են , երբ

- Ամուսիններից մեկը իրեն ազատում է պատասխանատվությունից և մեղքը գցում ուրիշի վրա:
- Պահանջում է ընտանիքի մյուս անդամներից ապրել իր կանոններով:
- Չի կատարում իրեն վերապահված պարտականությունները:

Կոնֆլիկտները կարող են սկսվել, եթե ամուսինները նախապես

համաձայնություն չեն եկել դաստիարակելու երեխային և չեն բաշխել

կենցաղային պարտականությունները: Միշտ վատ է, իսկ մյուսը միայն

աշխատում է և հոգում է ամբողջ ընտանիքի հոգսը և մեծացնում երեխաներին ,

իսկ մյուսը միայն աշխատում է կամ շատ ժամանակ է անցկացնում տնից հեռու:

Վեճերը կարող են հրահրել նաև ամուսինների ծնողներից ֆինանսական

կախվածությունը:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են,

Ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ

գիտակցի, Որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և

դաստիարակելու առողջ երեխա: Այդպատճառով ընտանիքում պետք է.

1. Կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. Ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. Բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ` հիմնված սիրո և հարգանքի վրա:

Ընտանիքում կոնֆլիկտները շատ բացասաբար են անդրադառնում երեխայի վրա, հատկապես , եթե դրանք համակարգված են կամ ձգձգված: Ծնողների մշտական լարվածությունը կարող է երեխաների մոտ անհանգստություն առաջացնել, ներոտիկ խանգարումներ և հիվանդություններ առաջացնել: Ընտանիքում հարաբերությունների խախտման խնդիրը նոր և բացառիկ բան չէ ժամանակակից հասարակության համար: Այն միշտ եղել է:

Մեփական ընտանիքի խաղաղ ու
երջանիկ կյանքն ապահովելը հաճախ
նույնքան դժվար է լինում, որքան մի ողջ
նահանգ կառավարելը:

Տակիտու

Օգտագործված գրականության ցանկ

1. В. М. Целуйко <Психология неблагополучной семьи> 2006
2. Л. Б. Шнейдер <Семейная психология> 2008
3. Վանանե Միրզոյան <<Ընտանեկան կոնֆլիկտների տեսաները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա: Երևան 2014թ
4. Սեդրակ Սեդրակյան <<Ընտանիքի հոգեբանություն>> Երևան 2010թ